

Պէտապօցցու աշխատակիցներն էին: Կրիւսին: Ապէնցէլը: Տօրէրը: Բուսը: Նաէֆը: Գրանք բողոն էլ մանկավարժական եղանակները կատարեալապէս չհամար աշխոյժով աշխատում էին: Պէտապօցցին իր մանկավարժական ընդհանուր հայեցակէտը հետեւյ կերպով է ձեւակերպում իր գրուածքում:—մարդկային բնութեան զարգացումը ենթարկուած է բնական օրէնքներին որոնց հետ կանոնաւոր գաստիարակութիւնը պէտք է համերաշխութեամբ ընթանայ: Ահա նրա գաղափարն է ից մի քանիսը.—

1. Բնութիւնը միաժամանակ չէ զարգացնում մեր բոլոր ընդունակութիւնները:
2. Այդ զարգացումը հեռեալաբար է և ծանրընթաց ու միշտ բնաւորութեան անհաստական գործն է:
3. Վարժութիւնը կրթութեան ամենամեծ միջոցն է: Բնութիւնը կրթում, վարժում է մեր ընդունակութիւնները այն բաներով որոնց նա շարունակաբար ընդարձակում է մեր քննութիւնը:
4. Կրթութեան գործը հիմնուելով կանոնաւոր վարժութիւնների վրայ, կառավարչի մարդկային բոլոր ընդունակութիւնների ներդաշնակ, ազատ, առաջադէմ զարգացումը:

1804 թ. Իւրնի կառավարութիւնն առաւ Պէտապօցցուց՝ Բէրտու ամրոցը ուր հիմնեցին մի ապաստանարան, իսկ Պէտապօցցուն Միւնխէնբուքում մի հին վանք յանձնեցին նոր ուսումնարան հիմնելու:

1805 թ. Պէտապօցցին հրաւեր ստացաւ Ռվերդօնից և չը կարողանալով մաքառել երկաթի կամքի տէր Ֆիլէէնբէրգի հետ՝ որ իւր աշխատակիցներից մէկն էր, զնաց Ռվերդօն, ուր նրան հետեւեցին Միւնխէնբուքի ուսուցիչները և աշակերտներ: Գրանք բողոն էլ տեղաւորուեցին Ռվերդօն ամրոցում, որ քաղաքը յանձնել էր Պէտապօցցուն:

(Շարունակելի)  
ԲՏ. ԼԵԻՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ.



ՇԱՐԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Բ.  
Ս Ա Ղ Մ Ո Ս .



նարեզու Գաւիթ մարդարէի աստուածահաճոյ գործերի Տիրոջ անունով և նորա անուան փառաց համար մղած պատերազմների, որոց մէջ ցոյց տուած անպարսկի քաջութեանց և Ստրայէլեան ապերախ ազգին մատուցած ամրիժ ծառայութիւնների պատմութիւնը եթէ պէտք է որոնել Սուրբ Գրքի ԽՆԱՆՈՒՄԻ ԽՆԱՆՅ գրքերի գեղեցիկ էջերի մէջ, այս հոգեխօս մարգարէի առ յաւիտեանական Թագաւորն ունեցած անքակտելի սիրոյ, երկիւղածութեան, հնազանդութեան և ճշմարիտ հաւատքի պատմութիւնն ևս պէտք է տեսնել իւր ոգեգրած ՍԱՂՄՈՍԻ մէջ, մի գիրք, որի մէջ բարեհամբոյ մարգարէն կարծես թէ չէ ցանկացել որ ի տես Աստուծոյ դուռն լինին միայն իւր անձի դժբաղտութիւնները, անիրաւ բանի համար՝ իւր սրտի յուզմունքները, իւր հոգեւոր և մարմնաւոր պէտքերը, իւր երկնաւոր ակնկալութիւնները, և միանգամայն իւր մարդկային կամայ և տկամայ սխալանքները, այլ և այն անձինքներին ևս, որոնք իւր նման ծարաւ սրտով աստուածային ողորմութեան, շնորհաց, խնամոց և մխիթարութեան մշտապէս պէտք և կարօտութիւն ունին: Մի գիրք, որի սրբութեան զօրութիւնը ինքն՝ Քնարեզուն, առաջին անգամ փորձեց այսահար Սաւուղի վերայ, և նրա դիւր և ամենազօր բանիւն առժամայն տկարացնելով նրան լկող թշնամու աննահանջելի զօրութիւնը, ևս և առժամայն սանձահարելով և թշուառ արքա-

յի կատարի մոլեղնութիւնը կրկին դարձրեց իրեն՝ այս դժբաղդ թագաւորին, իւր կորցրած զգոնութիւնը մարդասիրութիւնը և որդե- սիրութիւնը՝ որոց անուշութեան փորձը տե- սաւ նոյն իսկ Քնարերգուն իւր վերայ—«Եւ սիրեաց զնա յոյժ»։ ասում է Սուրբ Գրիգոր 1։

Ահա այս սրբազան Գրքի աստուածընկալ նիւթն է միայն պատճառ՝ որ ինչպէս ամենայն քրիստոնեայ ազգեր ի փառաբանութիւն Աստուծոյ կանխած ժամանակ առաջին անգամ առան և երդեցին իրենց սուրբ Սորաններում «Ծղարն ամենայն իմաստից սուրբ Գրոց» Դաւթի Սաղմոսը<sup>2</sup>, այսպէս էլ և մեր ազգի աօսելի Հայրերը սկսած ս. Լուսաւորչից երբ հեազհեաէ Հայ հոգի վերայ յանուն Աստուծոյ բարձրացրին սրբազան տաճարներ, վանքեր, մատուռներ և վկայարաններ և լցրին այդ աստուածարնակ շէնքերը աշխարհիս վազանցուկ վայելքներին ծաղր դնող վանականներով, անապատականներով, միայնակեացնե- րով, կուսաններով ի մի բան—ժողովրդով այդ ժողովրդի և իրենց աղօթելու համար առաջին անգամ միմիայն ընտրեցին և վերառան «Թացեալ և ներկեալ շնորհօք սուրբ Հոգւոյն» Դաւթի հրաշալի Սաղմոսը<sup>3</sup>, Սաղմոսը, որ կորովաբան Աթանաս հայրապետի, Եպիփան կիրարացու, Ներսէս Լամբրոնացու, Վարդան Բարձրաբերդցու, Գրիգոր Տաթևացու և այլ աստուածարան սուրբ Հարց ընտիր ուշ ու միտքը յափշտակելով թէև մեծ տառապանքով աննման զովեսաներով ի ցոյց բերին նոքա Նրա սրբազան Կշերը, սակայն սուրբ Հոգւով հրազնուած եկեղեցւոյ այդ անպարտելի Հայրերը, դարձեալ թերի և պակաս համարեցին իրենց մեկնողական զովքերը։

Այսպէս էլ յետին ժամանակի անյայտ նօտարներից մինն, Սաղմոսի վերայ իւր յօրինած սրտազրաւ մի երգի մէջ՝ տեսէք, որպիսի ճարտարութեամբ իրար հետ հիւսելով Գով

Սրատ և Աւեղծուած (հանելուկ), ցոյց է տալիս մեզ աշխոյժով նրա պատուակնու- թիւնն ու մեծութիւնը, նմանեցնելով իրեն՝ Սաղմոսին՝ մի լուսաւոր տաճարի, ութ մա- խաղի և կաթնով լցուած ութ փարչի, նրա ութ կանոնը—ութ անկիւնի, նրա ութ գուր- ղաները—ութ քսակի՝, նրա հարիւր յիսուն զուլաները—հարիւր յիսուն պատահանների, սաղմոսներից շինուած ժամադիրքը—զանազան ծաղիկներով լցուած մի արձակ դաշտի, ժա- մակարգութիւնները—մի աղիւսակի, ժամա- գրքի սկիզբը դրած վաթսուն և չորս աուն Տէր զի բազում—վաթսուն և չորս ոսկէ դւան<sup>4</sup>, բոլոր Փոխերի տները—հազար սպի- ասակ լեռան<sup>5</sup>, նոցա առաջին տան զլիսադե- րը—հոգուի, նոցա միւս աների զլիսադերը— սեորակ մաքիների, այս ամենը ի լոյս բերող թանաքին և թանաքամանին—ծննդկան մօր, զըջին—հօր, սրանցից ծնուող զբերին—սեաւ որդւոց, թղթին—սպիտակ դաշտի, այս ամե- նը ընթերցող, լսող և կատարող հաւատա- ցեալներին—կոյսերի, բողբոխի և պոսնիկների, իսկ նոցա երկնաւոր վարձը—ոսկէ թասի, ա- հաւաստիկ —

«Գ. Լուսան-Քիւն Սաղմոսն<sup>4</sup>».

«Բանք Սաղմոսին է պատուական Լցեալ հոգւովն աստուածական».

1. Յոյան Իմաստասէրը Կանոնազլիտով միասին գուրդաները եօթն է հաշուում։ Իսկ երգիս հեղի- նակը թերևս մի գուրդայ է հաշուում և իւրաքան- շիւր Կանոնի տակ գանուած Քարոզն ու Աղօթքը։  
2. № 179յ. 2եռագիր մեկ՝. ժամակարգութեան խրատի մէջ գրուած է 66 աուն. «Տէր եթէ զըբ- թունս իմ, երկու աներն ևս հաշուելով, 3. Փոխե- րը են, —Տէր զի բազում—64 աուն. Կանոնազլուութ- ք—120, Լարց—48, Մեծ—8, Ող—20, Տէր յիւր 28, Մանկ—8, Սիրեցի—25, Բանից—36, Աշաղակ—6, Աստուած աստ—21, Տէր հոգ—33, Ճաշու երեք Ո- զորմեա—60, Տէր հոգ—14, Երանի—20, Սիրեցի— 16, Տէր թագ—6, Գովեա—10, Օրհն. զտր. ամ. ազ—2, Խոնարհեցո—16, Ապրեցո—32, Աղիդ եղ— 4, Լամբ—8, Որ բնակ—28, Աստ օրհ—18, Ի կար- դալ—65, Տէր լոյս—16, Երանեալ—56, Բատին— 64, Արարի—56, Եկեացէ—92=100 աուն. 4. № 548 2եռ. Ատենի ժամագիրք ս. Աթոռոյս թղ. 278.

1. Առաջ. Թագ. Ժ. 21, 2. Մեկ. Սաղ. 2ամ. 5. ա. 20, 3. № 153. 2եռ. Աստուածաշունչ Մայր Աթոռիս «Յազագս երգոց Սաղմոսարանի» թղ. 294.

Որք ի յասին յօժարանան  
 Արքայութեան արժանանան  
 Սաղմուրն հսն է երկնային  
 Սեղան կազմեալ մեծի Ռաւթին.  
 Որք ի հացէս այս կերակրին  
 Ասառածային սիրովն յագին  
 Սաղմուրն դանձ է անսպառ,  
 Ո՛վ որ ստանայ զսա մեղմարար  
 Զյապտեր հոգւոյն պահէ ի վառ,  
 Եւ մասնէ ի փառս անձառ.  
 Սաղմոսն աղբիւր կենդանարար  
 Մեղաց քաւիչ և սրբարար.  
 Ո՛վ որ ասէ զսա մեղմարար  
 Սա սուրբ հոգւոյն լինի տաճար  
 Իսկ որք չասն և ի քուն լինին,  
 Եւ Սաղմոսին ոչ փափագին,  
 Յանմահական հացէն սովին  
 Յաւուր մեծի դատաստանին  
 Իսկ որք ասն զսա կիսատուն,  
 Վնաս առնեն իւրեանց հոգւոյն  
 Թէպէտ կենան գիշերն արթուն,  
 Դատարկ ելցեն ի սուրբ վարձուն  
 Իսկ որք ասն ծայրատելով,  
 Անմարար շողփաղփելով,  
 Վսն է նոցա պահեալ յողով,  
 Զի յաստուծոյ են ամօթով  
 Իսկ որ ծայրատ սաղմոս ասէ,  
 Կիսատ տնով յաւարտ ածէ,  
 Սա յաստուծոյ ամօթ կրէ,  
 Եւ ի բարեացն անմասն ելցէ:  
 Եղբայր՝ ինձ միտ զիր դու հոգւով  
 Տեսի տաճար մի լի լուսով  
 Շինած կազմած ութ անկիւնով  
 Եւ աստիճանք իւր համարով:  
 Վաթսուն և չորս ոսկի դանով  
 Ը. Ը. [հարիւր յիսուն] պատուհներով,  
 Ի նմա կուսանք կուզան լաղով  
 Բողք և պոռնիկք պարեն հոգւով  
 Այլ որ կամին յօժար սրբտով  
 Ըզնա խմէ ոսկի թասով  
 Ուրախանայ ինքն հոգւով  
 Յարքայութիւնըն պարելով  
 Ութ մաղխս ես ունէի

Եւ ամէն մէկ ութ քրսակի,  
 Զորն որ պիտէր զայն բանայի,  
 Սա ինձ բուրէր հոտ կընդրկի:  
 Ութ փարչ տեսի կաթամբ լրցած,  
 Գոյն ունէին քան զհուր վառած,  
 Յորոց արբի ես անքօտած.<sup>1</sup>  
 Ի ոչ լիացայ զերդ ծարաւած,  
 Շնորհակց մին աղիւսեակ.  
 Ի ունի հազար լեռուն սպիտակ,  
 Սոցա մաքիքն են սևորակ,  
 Իւրեանց հովիւքն որպէս հրեշտակ:  
 Մօրն իւր արգանդն էր սևային,  
 Հօրն բարակ ամենկին,  
 Որդիքն սեաւ ծնանէին,  
 Դաշտի սպիտակ բնակէին:  
 Դաշտ մի արձակ և պատուական,  
 Լըցեալ ծաղիօք յոյժ զանազան,  
 Ոչ յեզանակս միայն զարնան,  
 Այլ անթառամ ժամս ամենայն<sup>2</sup>;  
 Արդ՝ այս և այսպիսի քաջակիրթ գրիչների  
 միջոցաւ դարերի ընթացքում Սաղմոսի ու-  
 սումը այնքան տարածուեց ամեն հասակի դա-  
 սակարգութեան մէջ, որ ոչ միայն անհամէր  
 համարում բանիբուն քարոզիչը իւր տուած  
 կամ զրած քարոզը, եթէ նա չէր համեմում  
 սաղմոսներով, որ ոչ միայն անդիւր անդիւ-  
 բեկան էր համարում պատմաբանը իւր պատ-  
 մելիքները, եթէ նա իւր պատմած ուրախ և  
 սրտաձմիկ դէպքերի և անցքերի հետ որպէս  
 յակինթ չէր յեռում, չէր կայնում իւր ա-  
 սելիքին աւելի ներգործութիւն տուող սաղ-  
 մոսներ, այլ և նա, ով հաւատ սրտին լիա-  
 ձեռն գրամով հանդէս էր դուրս գալիս զի-  
 ցուք մի աստուածահաճոյ շէնք շինելու և շի-  
 նում էր, նա իւր ուրախութիւնը կատար-  
 եալ չէր համարում և չէր հանգստանում  
 մինչև որ իւր արած բարեգործութեան փո-  
 խարէն կտակով չէր երդել տալիս եկեղեցի-  
 ներում միայն կենսատու սաղմոսներ: Այս

1. Ինձ անձանթ. 2. Սաղմոսի վերայ յօրինած  
 մի այսպիսի Գովեստ ունի Սիւնեաց Առաքել վար-  
 դապետն ևս. տես № 1195. ԺԱ. Մեկ. Սաղ. սուրբ  
 Աթոռոյս թղ. 564.

մասին եղած անթիւ և անհամար օրինակներէից յիշենք միայն (Թ-րդ դարում Գրիգոր Սուփան Սիւնեաց բարեպաշտ իշխանին որ կոթայ ս. Աստուածածնի «զարմանակերտ փաբար» և Մաքսինեաց սրբազան ուխտի մէջ Աստուածածնի «երկնածեմ խմբարանը» շինելուց և իւր մեղքի քաւութեան համար մեծամեծ անշարժ և շարժական կարուածներ և թանկագին սպասներ այդ վանքերին յատկացնելուց յետոյ) ապա բաղկատարած դիմում է այդ փառաբնակ ուխտերի մէջ մշտամուռնչ աղօթքով և պահքով ջերմացող սուրբ հայրերին և ահա լալով ինչ է խնդրում— «Մաղթեմք զամենայն անձացելոյ սուրբ ուխտիդ զպաշտօնեայսդ . . . վասն մեղուցեալ հոգւոյս . . . անկափան երգել զերեկորին սաղմոսն՝ զՍեղութեան կանոնն և զառաւօտու Սաղմոսն և»

Սաղմոսի ի նախնիս անչափս տարածուելու համար ինչու կրկոնեք զբքերս ինչ են ասում մեզ համեղ ձայնով ծննդեան երեկոցեան մեր տան երգիլի շուրջը իրար ետեւից բոլորուող Արարատեանս գաւառի այն զիւղական ձարպիկ մանուկները, երբ ՍԱՂՄՈՍ և ԱԵՆՏԻՍՏՈՍ իրար հետ եղբայրացրած զալիս են մէկի անունով մեր ձախ ձեռից) միւսի անունով մեր աջ ձեռից նուէր խնդրելու և ամաց կամաց կախ անելով երգից մեր առաջ իրենց դժուծ տոպրակը—

Ալէլուիա, ալէլուիա  
Եւ ցնծացէք, ուրախացէք,  
Մեր Մայրիամի պասը բացէք,  
Մայրամ՝ գնաց լեռն ի ծնունդ  
Ծննդութեացաւ, աղատուեցաւ:

Հրէս եկաւ մի ձիաւոր,  
Լախտը ձեռին բօզ ձիաւոր,  
Աջու ձեռին Սաղմոսարան,  
Չախու ձեռին Աւետարան,  
Չինի, չինի ձեր տղի անումն ինչ ա,  
— Ուրբէն.

— Ուրբէնին թախտը հանեք,  
Աջու ձեռը ջերմ տանեք,  
Օխտը խախալ ոսկի հանի,  
Չեր գուձանի աչքը հանի,  
Օխտը շահին չարը տանի:

Ի՛նչ են ասում մեզ և նոյն գաւառի պարկեշտասուն և ձէնով աղջկիբը և հարսները, երբ առաւօտեան ծէքին այգի և դաշտ դուրս գալով՝ ծիրան են կիտում, կամ խաղող քաղում, կամ խնձոր պոկում, կամ զխաբարշ բամբակ քաղհանում, կամ շանաքում՝ իրենց անոյշ երգի մէջ խօսքն ուղղելով իրենց կարգացող եղբօրը, նմանեցնելով նրա կռան տակի Սաղմոսը— վարդիլ իսկ նորա քաղցրախօս լեզուն — բիւլբիւլի.

— Իմ աղբեր ծառան տակին  
Սաղմոսը կրռան տակին  
Սաղմոսը գիւլ ա դառել,  
Լեզուն բիւլբիւլ ա դառել:  
Երեսիդ խալին մեռնեմ,  
Քաքուլիդ կալին մեռնեմ,  
Լսել եմ՝ կարեացող ես,  
Սաղմոսիդ ծալին մեռնեմ:

Ո՞վ է շինել այս սրտառուչ երգերը, ո՞վ է մտքել առաջին երգի մէջ Աւետարան և Սաղմոս. թէ այս հարցմունքներին ոչ ոք պատասխան տուող չլինի, ես կասեմ որ այս երգի հեղինակը եղել է նոյն ինքն Սուփան իշխանի հոգին կրող իրենց հայրերի աստուածպաշտութեան և առաքինութեան շաւղովն ընթացող մեր հայ ժողովուրդը, այն ժողովուրդն ենք ասում որ երեկոյ և առաւօտ իւր մայրենի եկեղեցեաց և վանքերի շուրջ տակ արձանացած՝ լսում էր իւր հրեշտակակրօն հովիւների բերանից միայն Սաղմոս և Աւետարան և ինքն ևս խելամտութեամբ այնտեղ՝ Եկեղեցում, այդ երկու սուրբ Գրքերի կենդանարար նիւթը իրար մօտ բերելուց յետոյ, խմաստով այնքան մօտ գտաւ միմեանց, որ չհամարձակուեց նրանց դրսևումն էլ ոչ միայն ձեռքով՝ այլ և երգով բաժանել:

Ո՞վ է տուէլ նաև Սաղմոսումն նուիրական անունը և այն վանքին, որը բարձրուղէչ սօսեմու պէս վերանբարձած Արայի լեռան և լաւահառայ Քասախի երկիւղալի եղբքի վերայ, իբրև մի լուսաթուղչ սերովբէ եր այն դարերի զիտում և հսկում է իւր ստորև ընկած Արարատեանս վանքերի, եկեղեցիների և նոցա մէջ խուկ ծխող պաշտօնեաների վերայ: Անշուշտ սորա պատասխանը կլինի կամ ժողովուրդը, կամ նորա և իւր հոգւոյ փրկութեան համար սաղմոս քաղող հոգեորականութիւնը: Այսպէս էլ դէպի Սաղմոսն ունեցած մի՛թէ մեր նախնի ժողովրդեան բուռն սէրը չէր, որ նա մէջէմէջ քաղելով իրեն սրտին մօտիկ նրա սուրբ

աներից և գլուխներինց կազմեց իւր համար՝  
 «չարակամութեան և անբարեացութեան կախար-  
 ցութեան, խօթութեան, զիւրահարութեան,  
 օձի և կարծի թունաթափութեան, ծովի մը-  
 ռընչող ալիքները դադարեցնելու» երկունքի  
 մէջ դանուող կանանց անփորձ ծնունդ շնորհե-  
 լու, ատամնացութեան, փորահարութեան,  
 զլիտացութեան» ևն ևն, դէմն առնող իւր այդ  
 լեկան ցաւերին դեղ ու ծար հասցնող մի սուրբ  
 Աղիւսակ, որի վերայ և իրեն կողմից աւելաց-  
 նելով լեռը իւր անդից խախտող Փրկիչ պա-  
 հանջած «ԱՒԱՍՐ» նրանով իրեն զիմոզին և  
 բժշկում էր, նրանով և բժշկուում էր 1:

Արդ՝ Սաղմոսը Եկեղեցուց առ ժողովուրդն,  
 և ժողովրդից առ Եկեղեցին այսպէս իրար մօտ  
 ընկնելուց յետոյ, դեռ շատ վաղուց՝ ըստ հա-  
 րազատ պատմիչների կարևոր դատուեց որ  
 այսպիսի մի սուրբ և սրբազան Գրքի ուսու-  
 ցումն էլ լինի առանձին և բերանացի. և այս  
 ի հարկէ այն նպատակաւ, որպէս զի երեկոյ և  
 առաւօտ Աստուծոյ տունն յաճախող քրիս-  
 տոնեան՝ լինի նա եկեղեցական պաշտօնեայ  
 կամ սոսկական, ո՛չ միայն ծանօթ լինի նրա  
 բովանդակութեան և անոյշ ձայնի հետ, այլ և  
 այն եկեղեցական կարգ ու կանոններին, ո-  
 րոնք սահմանուած էին իւրաքանչիւր ժամ ու  
 ժամանակի համար:

Հինգերորդ դարում Ղազար Փարպեցին  
 Վահան Մամիկոնեանի առաջ դնելով իրեն  
 դէմ բարբառնող վանականների այն աններելի  
 պակասութիւն համարուած սովորութիւնը,  
 որ նոքա հակառակ եկեղեցական օրինաց ժա-  
 մասադութեան ժամանակ «Միշտ զգիրսն ի ձե-  
 ուին ունելով» կարգում էին Սաղմոսը անկարգ  
 և վայրիվերոյ, ուստի այս «բանդագուշ» վա-  
 նականների այս օտարոտի սովորութիւնը ի-  
 րաւախօհ Վահանին մի կերպով հասկացնե-  
 լու և նրան ծանօթացնելու համար թէ իւր  
 նախնիքը որպէս իրեն, այսպէս և իւր ուսում-  
 նատենը ընկերներին որպիսի եղանակաւ էին

մարդում և քաշում հանում Սուրբ Գրոց զի-  
 տութեան լայնանխատ նստարանների վերայ և  
 «Իրև զգաթի սաղմոսն» աւանդում իրենց  
 աւանդածները, երախտագէտ սրտով այսպէս  
 է թափում զիտութիւն յարգող մարդկանի  
 առաջ իւր նախնեաց իրենց վերայ գործ դը-  
 րած մեծամեծ տքնութիւնները — իսկ մեր  
 երանելի վարդապետքն զօմենայն զկտակարանս  
 եկեղեցոյ երիցս և չորիցս ուսուցեալ մեզ  
 իսկզբանէ մինչև ի կատարած զրոցն համարս  
 պահանջէին ի մէջ զնոյնս և իրրև զՊաւթի  
 սաղմոսն՝ պաշտել մեզ հարկաւորէին 1:

Այո՛, նրանք՝ որոնք Ղազարի նման ծուա-  
 րում էին վանքերում և այլ իմն անձկով հե-  
 տամուտ էին արագաթուիչ ընթացքով ձեղքել  
 անցնել «Ընդ անհուն ասպարէզս տեառնաշունչ  
 կտակարանաց» 2, այդ աստուածային բաների  
 ուսումնասիրութեան ուղեղնացութիւնը առա-  
 ջին անդամ կատարում էին նոքա Պաւթի  
 սաղմոսներով, մեծ կշիռ տալով չարափառ  
 Արիստի բերանը խցող սքանչելադործ Աթա-  
 նաս հայրապետի այս խօսքերին, «Սուրբ Գիրք  
 ի ստեղծմանէ աշխարհի կարգաւ իմն յառաջ  
 բերեն զամենայն, և որ ինչ անդ գտանի՝ զա-  
 մենայնն գտանի ի Սաղմոսի, ըստ պատմու-  
 թեան, ըստ օրինաց, ըստ նուիրանաց, ըստ  
 վարուց և ըստ գուշակութեան զալստեան  
 Փրկչին և նորին չարչարանաց և յարութեան» 3:

Սաղմոսի բերանացի աւանդուելու մասին  
 Ղազարի նման մի այսպիսի զգալի օրինակ  
 դնում է մեր առաջ և սուրբն Եղիշէ, երբ նա  
 Վարդանանց նահատակութեան պատմութեան  
 թեւը կարելով սկսում է սուրբ Ղեոնդեանցը:

Գրնշապուհ՝ այս խտտասիրտ պարսիկը, երբ  
 Զազկերաթի հրամանաւ Ղեոնդեանց հետ իջնե-  
 լով Ապար աշխարհ՝ ձեռք է առնում չարչա-  
 րել նրանց և տքնում հանել հաւասարից, բայց  
 և այնպէս երբ չէ յաջողուում այս դժնեայ  
 իշխանին ի գլուխ հանել իւր չար մտադրու-  
 թիւնները, այն ժամանակ որպէս գիշատիչ մի

1. Աղիւսակի մասին տես № 564. 2եռ. ժողո-  
 վածու Ս. Եթոորս. թղ. 58.

1. Թղ. Ղազ. 682. Վա. 191. 2. Մաշ. 2եռ.  
 11դեր. 1876. էջ. 52. 3. Մեկ. Սաղ. 2ամ. 31.

գաղան նա յարձակուումէ կատարարար Փրկչի այս անարատ դառների վերայ և իւր ինքնաքամ սուրբ վերացնելով Ոչաունեաց Սահակ եպիսկոպոսի վերայ թափով զարկում կարում է թիկունքի հետ նրա աջ ուսը և վայր ձըգում իսկ այս ընտիր նահատակը արիւննաշագախ ընկնելով գետին և թանկագին կորուստ որոնողի պէս միւս ձեռքով իւր ընկած թեւը վերացնելով գետնից, ուստի և մի աչքը իւր կարած թեւի վերայ և միւսը դէպ երկինք սեւեռած, իրենից վիժած յորդհաս արեան հետ մրմնջում է Սաղմոսի երեսուն և երեք դիտից այս տասն և ինն տուն սաղմուր։— «Որհնեցից զտէր յամենայն ժամ հանապաղ օրհնութիւն նորա ի բերան իմ։ Ո տէր պարծեսցի անձն իմ լուիցեն հեղք և ուրախ եղիցին։ Եւ ասելով զսաղմոսս զայս» աւելացնում է Եղիշէն «կատարէր մինչև ցայս տեղի. Բազում նեղութիւնք են արգարոց, յամենայնէ փրկէ զնոսս տէր և պահէ զամենայն ոսկերս նոցա, և ապա անմեղութեամբ առանց թախծութեան կսկիծ սրտին՝ փակում է իւր աչքերը Ապար աշխարհի աստղերի տակ<sup>1</sup>։

Ահա մի օրինակ, որով կարելի է չափել թէ մեր նախնիք որչափ սէր էին բերում զէպի Սաղմոս գիրքը և ի մանկութենէ սերտում, սովորում ծայրէ ծայր նրա մարգարտաշար տները, և այս անում էին— որպէս զի թէ ի տան լինեն թէ յանդի, նրանով վճարեն իրենց աղօթքը և հոգեպէս մխիթարուեն, եթէ չեն կարողացել նոյն օրը եկեղեցի գնալ և աստուածային պաշտամանդ ձայն լսել. թէ ի տանջանս լինեն թէ ի բանտի, նրանով բժրշկեն և դիւրեն իրենց սրտաբեկութիւնը և մեղմեն իրենց ցաւերը. թէ ի գերութեան լինեն թէ ի հալածանս, նրանով սիոփեն իրենց վրտարանդութիւնը և օտարութիւնը, ևն. ևն. և մենք մեր այս հայեացքը բացատրում ենք, ապացուցանում ենք Փարպեցու այն խօսքով որ սուրբ քահանայք Աւարայրի պատերազմի շարժման ժամանակ Վարդանանց կող ու կուշ-

տր բռնած՝ քաջաբերում էին նրանց «Մերթ սաղմոսարանին զուրդայիւք, մերթ վարդապետական բանիւք»։ Եղիշէի այն խօսքով որ նոցա հինգ հարիւր անմխիթար և սգաւոր կանայք ոչ այլ ինչով չէին մխիթարուում իրենց մտայլ բնակարանների մէջ, բայց միայն «Սաղմոսք էին մշանջնեաւորք մրմունջք ի բերանս նոցա» և վերջապէս Ներսէս Դնորհալու իւր ժամանակի պարտաճանաչ և ստահակ քահանաներին դրած այն թղթով, որով գովում է մէկի փութաջանութիւնը և կշտամբում միւսի անփութութիւնը ասելով, — «Վրսեմք զամանց սուտ քահանայից, զի ոչ միայն յայլ ուսմանէ են տգէտք... այլ և զ'ազնն ի... թէ ոչ ք' ք'ն ք' լ'ն ք' ի, առանց որոյ բզնոսին զհարիւր և յիսուն փոխան Խօհէլ Էլնաւ ընդ Ստուծոյ՝ ոչ մատչի պատարագ ըստ աւանդութեան կանոնի հարցն սրբոց<sup>1</sup>։

Այսպէս ուրեմն «Ստ աւանդութեան կանոնի հարցն սրբոց» Սաղմոսի հարիւր և յիսուն զուխը կամ 2666 տունը ոչ միայն աւանդում էր բերանացի<sup>2</sup>, այլ և «Ստ աւանդութեան կանոնի հարցն սրբոց» ժամբողջութեանց երգերի թուում առաջին անգամ Սաղմուր միայն ծառայաւ բարձրացաւ մեր Եկեղեցւոյ մէջ և եղաւ այն քաջաբեր արմաւենին, որի խնամատարութեան համար գորովագութ սրտով ասում էր իւր ժամանակակիցներին Պարթէն Սահակ, — «Սաղմոսերգութիւնք անխափան կատարեսցին յԵկեղեցւոյ<sup>3</sup>։

Այժմ տեսնե՞ք թէ այս սաղմոսերգութիւնները սկիզբն ո՞ր դարում յառաջացան, ո՞ւր ձեռքով և երբ էին երգուում։ Այլ և ո՞ր դարում յաւելացան նրանց վերայ և այլ եկեղեցական անձայն և ձայնաւոր ընթերցուածներ, որոց համագումար եղբայրութիւնը ի

1. Աաղ. Եղշ. և Ընորհ վկայութեանց մասին տես Պատ. Աաղ. 227 և զ 324. Ընդ. 1865. էջ. 79. 2. Մեկ Սաղ. 2ամ. հատ. ա. 1823 Վ.տ. եր. 54. դրուած է սաղմոսների թիւը 2162, լատինացւոց 2612 և այլոց 2530 իսկ մենք հաշուել ենք ութ Օրհնութիւններն ևս. 3. Պատ. Թողովոց. Կանոն. դ. 1874. էջ. 50.

բոլոր սրտէ ընդունելով Հայաստանեայց աշխարհ, ի ճակատ այն ՄԱՏԵՆԻՆ՝ ուր այս ամենը կան խմբուած: Իրաւամբ արձանագրել տուեց իւր որդւոց այս հակիրճ խորագիրը—

**ՓԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ:**

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ:**

ՍԱՀԱԿ ՎԱՐԳ. ԱՄԵՏՈՒՆԻ.

**ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ.**

ՅԱՂԱԳՍ ԶԱՅՆԻՅ ԹԷ ՈՒՍՅԻ ԴՏԱԻ:



(Հարունակութիւն).

րանելոյն Բարսեղի յղ կս ձայնից թէ ուստի իցեն և կամ յում մէ գտան: զոր թարգմանեաց Ստեփաննոս փիլիսոփա. զի նա եղև Երաժիշտ և Հըմուտ ձայնից ամ կենդանեաց և բաժանեց զձայնս իմաստունս. Իդ. որ են այսքիկ: Բառաչել. Բչել. Կռնչել. Գոչել. Բընչել. Մնչել. Բբչել. Կառանչել. Մըմբընբել. ձչել. Կանչել. Գոհգոհչել. Վչել. Խանչել. Հառաչել. Կառանցել. Կաղկնձել. Հաջել. Կանկանջել. Զոկել որ է Կարկաջել. Սողալ. Սրովինջալ. Մնջնջել. Ճոճոռել: Եւ սա առնոլ ի ձայնից և գ[ո]րծէ զուգաթիւս առ ամ ձայնս, որ մի առ մի երգեն սոքօք ձայն արարեալ:

Արդ՝ ետ սորա Սարգիսնոս թեզրոցի լեալ երաժիշտ ըստ արուեստատր գործարանի զամ հաւաքեալ զձայնսն. ի մի աղի և զմի մի ձայն ի բաց բաժանեաց մինչև ի քարանձանգամ զգալ զխորխտաղմունս ձայնից ամ կենդանեց:

Եւ ետ սորա զեգէոս. երաժիշտ լեալ սլակերդ ի սոցանէ յարմարեաց նո՞ւագս և

հարկանէր նովաւ զամ՝ ձայնս կենդանեաց: Այլա Սենեգէս. երգիչ լեալ. և ուսեալ զնոցայն և ի հիւանակոփ փայտէն հնչմանն գրեալ զառաջին ՁԱ ձայնն: Եւ ապա փլեղէգէս. եղբայր նր երաժիշտ եգիտ զգեսարսն. որ է երկրորդ ՁԲ ձայն ի դարունէ և երկաթէ կռելոց: Եւ ապա Սոփեկէս եղբայր սոցին եգիտ զերաժշտական տառ. ի տոնն որ է երրորդ ՁԳ ձայն աւրինակել ի գետոց խաղացմանց և ի [Յ]որձանաց հոսմանց:

Եւ ապա Պիպանոս քեռորդի նոցին լեալ երգիչ զուսուստոսն որ է չորրորդ ՁԴ ձայն ի հոսմանէ ծովային ալեաց: Արգելէս. երաժիշտ եգիտ զամ ի մարութի որոշաբար ըստ աշտիճանից ի յի նէն. քանզի ասնն զնմանէ ոչ միայն վարժել զս որոյ կողպատեալ զլսելիսն և խցել զի մի լուիցեն զայլ քաղցրութիւն ձայնից. և ի Թէօփիլեան եղանիլ գործեաց երաժշտականաց զոր ի ձայնից աստեղաց ուսան առաջինքն: Եւ ապա Դաւիթ թգր և մարգարէ և երգող ածալին երգոյն. և արդ՝ ամից դաս և [Յ]որմարումն ձայնից զմինն ար և ամ անն զամ զոր մարգարէն ասէ. սղս ասացէք թգրին մերոյ հետեցին և ոմանք առանց գործոց երգէին. ասափ և էափ ծծղաւաք վերագոյէին: Զաքարիա և Ովրամ և Սամիա և էլիսս և Մովսէս և Դիթում: տաւրիք երգէին:

Ուշագրութեան արժանի են՝ ըստ տասն արարածոց է շրջ Երանց 10 բարգեցաւ . . . . և է շրջ Երանց՝ բաժանեաց չորս կողմ և այլն: և Վնեգէս փլեղէգէս եղբայր նր Սոփեկէս և Պիպանոս գտնուամ են ՁԱ, ՁԲ, ՁԳ, ՁԴ: Այս տեղից երևում է, որ նախ քան Ս. Սահակը գոյութիւն է ունեցել չորս Բուն ձայն: Ս. Սահակը կարգաւորել և դարգացրել է, որպէս պատմում է Յայմաւուրբը: Վերոյիշեալ երկու կտորները համեմատելով տեսնում ենք, որ ձայների նշանակութիւնը նոյն և նման է:

Մեր ձեռքն անցած խաղաքերը քսան և